

5081

hæjleptu

1886-X2
Lundby

Upprethlytand fignurupulst

Upprethlytand, 6-11-71 fignurupulst

X 2009

X 20006 Zug fignurupulst

Upprethlytand fignurupulst 1731-18
mogul fignurupulst
fignurupulst fignurupulst
fignurupulst fignurupulst
Upprethlytand, 6-11-971

G. P.



* Պատմութեան վասն պղծե Կաղապին • որէ
օրինակ աշխարհիս :

ՆՅՐ ԴՊԱՂ ՏԵՏ ԻՆ
 զաքն խաւճայ մի • որում ա
 նուննէր աշգումէ լիք • օր մի 'ի
 մէյտան իջաւ՝ Ժողովեց ըզ իւր
 մե



2682-ԴԶ

մեծ մեծքն. եհարց վս սողումունի. Թէ
 ուն հրաման առնէր 'ի վր դիւացն.
 Յառաջ երեկ ամիրան, և ասաց հը
 զօր և մեծ խալիֆայ. կայ մարդ մի,
 որդի է վաճառականի. և ասաց Թէ
 ես գնացի 'ի սեւ լեկիայ կղզին և մո
 լորեցաք 'ի ծովին խօր. և ապա ելաք
 'ի լեառն մի բարձր, և ամենեւին ոչ
 ճանաչէաք զտեղին և տեսաք մրդիք
 սև, և այլադէմ բարև տվին. և տա
 րան զմեզ 'ի տունս իւրեանց. Եւ
 կացաք քօր. և ելել գնացին 'ի ծովն
 ի յորս, և տարան զմեզ 'ի հետս իւ
 րենց. արկին զգործին և կալան շատ
 ձուկ, և 'ի հետ ձկանց բերին կուժ
 մի արձիճով. մատնէ հարած սողում
 նի մօհրովն. Եւ բացեալ զկուժն
 ելան սև մուխ բարձրցան յօդս և
 եղև գիշատեսիլ մրդոյ աղաղակեց
 և ասէ. սողումուն սողումուն. որդի դան
 Թի մրգրէի. մեղայ այլ չը գործեմ
 զինչ գործ եցի. այլ կամ 'ի հրամանս
 քո. Օ ի գիտաց դէն Թէ դեռ ես

ք

սո

5081 - 111

դոմոն կենդանիէ։ Յայնժմասէխա
լիՊան ոչ հանգչի սիրտիմ մինչևտե
սանեմ յայն կժերուն։ Լապա հա
նաւամ այդ բանիդ։ Լա՛հ հրամայեց
խալիՊան տալիպին սրդւոյն սէհա
լա, թէ գնայ առ ամիր մուսէն։ յա
րեմտից տէրն։ որ երթաք երկուքդ
'ի ժուռ դաք մինչև գտանէք յայն
կժերուն։ Լինա՛հ հաստատուն զրուց
ասէք։ Թէ ինչ կայ 'իծովն կամ 'իցա
մաքի։ Լա՛հ ետ խալիՊան շատգանա
տալիպին և պատուական ակունք տա
ճիկ ձիանք և ազնիւ ծառայք։ Վը
նաց տալիպն առ ամիր մուսէն։ Լ
եւա՛հ ամիր մուսէն շատ հեծելովք։
յաշխարհն ականացոց թագաւորին։
Սարդաց թագաւորն ականացոց ըզ
հրաման տալիպին։ Լ կոչեաց զինչ
իւր աշխարհն հին մարդ կայր։ Լ շա
տաշուրջ վաճառական։ Վտան ալե
ւոր մարդ մի որ գիտէր զծով և զցա
մաք։ Լ զանբնակ աշխարհն տեսելէր։
Լ հարց թագաւորն և զծերն և ա
սէ։

սիրելի գիտես զայն տեղն որ սողո
 մոն բարկացաւ դիւացն. և ի պըղըն
 ձէ կուժն էած արճիճով մատնէ հա
 րեաց և ի ծովն ձգեաց. Լսաց ալե
 ի որն այոյ գիտեմ. Լսաց Թաւորն
 Թէ պիտի որ տանիս զխալի. Եւ այն և
 ամիրայքն յայն տեղն. Լսէ ալե
 ի որն յոյս ունիմ առ անձ՝ որ զբարին
 առաջնորդէ. Բայց զճանապարհն մոռ
 խաթրէ. և հեռու խօր. անջուր պի
 տի գնան և գան. շատ զարմանք կայ
 ի ճանապարհին. Յայնժամ ասաց
 Թագաւորն ցամիր մուսէն Թէ այդ
 գիտուն ծերդ որ աշխարհիս այլ չը
 կայ. ի քեզեմ տունէլ. ծուռար էած
 ամիր մուսէն և խելաթեաց զծերն.
 Եւ հարց ցծերն Թէ ինչ պէտք են ճա
 նապարհին. Լսաց ծերն Թէ ու ուղտ
 անելի. պիտի քան զմեր գրաստն որ
 ջուր բառնանք և մանուկ ի պուի աշ
 խարհն. բայց զջուրն պիտի ապիկի
 կծով բառնամք որ ոչ ցամաքի. զի
 հողմն սաստիկ կայ. որ ցամաքեցնէ

զըռւրն 'ի տիկն: Օայնժամ զուգե
ցին և սաղեցան 'ի ճանապարհ: Եւ
գնացին քն ձիաւորօքն 'ի շէն և ան
շէն ինքրս: Եւ հասին անմիտաբը
նակ աշխարհն և լմնցաւ տարի մի.
և գիշեր մի ծերն զաստղն նշանէր
եդեալ. և երթային և ծածկեց ամ
պըն զաստղն. և մոլորեցան զճանա
պարհն: Եւ հարց ամիրմուսէն զծերն
և ասէ թէ յոր աշխարհի եմք. ասաց
ծերն թէ ոչ գիտեմ: Եւ ց ամիր մու
սէն թէ կրես դառնալ յայն տեղն
որ զճանապարհն կորուսաք: Եւ ասաց
ծերն ոչ գիտեմք. յայնժամ շատլա
ցին. և գնացին այն անունն 'ի վրա
մինչև 'ի կէս օր: Եւ մտան 'ի դուռ
աշխարհ մի: Եւ կայ 'ի մէջ տին սե
ւագոյն բլուր մի բարձր 'ի հեռուստ
և երևիւր ոմ ծուխ երևէր. և դի
մեցին 'ինն. և իբրև մօտեցան տե
սին զի գումպէթէր բարձր և գեղե
ցիկ. և շէնքն ամէնն պատուական ք
կունքէին եաքուտ և զումրու. և

շուրջ ակամբ զարդարել: Ասաց ա-
միր մուսէն փառք այ թէ ոյ գեղե-
ցիկ շինուածքեն. և դուռն գեղե-
ցիկ մարմարիոնէյէր. և զուպպէին
նստուածքն, ա ըղտոյ քալէր. և
գումպէթն բարձր արձիճով կայծ-
աեսաւ ամիր մուսէն և զարմացաւ.
բարձրուէ զուպպէին: Ան էր ան
վայր անմարդաբնակ. և բուն ճէր
ի վր պարսպացն. երբ զայն տեսաւ
շատ լացին: Ան ասաց ամիր մուսէն
թէ զատ ի յայ ոչ ոք կարէ շինել. զի
փառք և վայելչութի աշխարհիս
սուտէ: Ա- գրծէր շոյս ոգի:

*Վնաց ժամանակ նց զինչ զերազ
մութն գիշերին. չըկայ դառնալու
ճարակ յայս տեղիս զոր ի հետ թո
ղին: Անաղ թէ կարենք գիտնալ
թէ բարի գործով գնացին կամ թէ
հարուածով անցան վասն մեղաց
որ մէկ չերևին:

Յայնժամ ասաց ամիր մուսէն թէ
ուրեն սց տէրքն կամ շինողքն և

ուրեն որ շատ դատեցան . և ոմ ծա
 ղիկ Թարշամեցան և պակասեցան :
 Լսաց ալևորն Թէ պարտէ քեզ դո
 Տանալ զայ . որ փրկեաց զմեզ յայն
 մուխաթրայէն . և հասուց 'ի յայս
 վայելուչ տեղիքս . գիտես ամիրայ
 որ քո անձ սիրուիդ փրկեաց զմեզ .
 իմ հայրն կասէր Թէ ով որէ յայն
 տեղն մոլորեալէր . որ մենք մոլորե
 ցաք . այլ ոչ են երևել բայց աստից
 մինչև 'ի պղընծէ քաղաքն . ք ամսու
 ճանապարհէ . զայս աղէկսանդր շի
 նեաց . ընդ այս գնայր 'ի պղնծէ քա
 ղաքն : Յայն իմ ասաց ամիր մուսէն
 յառաջն 'ի քաղաքս մտանեմք և տե
 սանեմք զվայելուի քաղաքիս և ա
 պա երթանք : Եւ մտեալ 'ի քաղաքն
 տեսք . գեղեցիկ դարպաս մի շինած
 մեծ և լայնանիստ . և 'ի դուռն գը
 րածէր նօտր գրով : Լսաց ամիրան
 ով կարդայ զայս գիրս : Լսաց ալ
 և որն է ազգի գիր գիտեմ Լսաց
 ամիրան կարդայ :

Լա- Գրածէր զայս բաներս:

Սարդէն որ գայ 'ի յայս տեղիս Թող
լայ զմեզ ինքն խրատվի. որ մենք 'ի
մեր շատ իրացնենք բաժան ողորմու
լալի: Լա՛ն քիչ մի յառաջ երթայք և
տեսնուք իրք զարմանալի. և փառք
այ նայ տայ. քան զի նայէ միշտ կեն
դանի: Տեսէք դուք բազում զար
մանք. Թէ քանի մարդ հողէ դար
ձեր մահն բաժանեաց զմեզ. կորու
սաք զոր ինչ ունէաք: Համարս տա
լոցենք մեք արժէին զոր ինչ եմք գոր
ծեր այ վայ զանաչար ատեանն. ուր
զահեղ բարբառէ լսեր. Ժողովեցաք
գանձս բազումս. և այլոց Թողաք գը
նացաք զքիչն շատին վաճառեցաք
և զյա՛նիտենական դատաստանն մո
ռացաք: Լա՛ն 'ի հետ մեզ այն երեկ
զինչ որ յայս կեանքս գործեցաք.
Թէ չար արարեալենք նայ. զամէն
գրոց հաշիւն տիտանք:

Յայնժամ մտան 'իկարսն. և տեսան
զարմանալի շինողածս. և գետնա

մէջն ստլէր կապած էր. արծաթած
և ոսկէ ջրած. և գնացին 'ի մէկալ
դուռն: Եւ գրած էր ոչ ք:

Բանի ադամայ որդիք ծներ յայս
կենքս ու մեռեր. և քան զանասուն
անբան կենդինիքս աստէն մոլորեր:
Բայց որ իմաստունք են եղեր. նա'
զայս կեանքն սուտեն համարեր.
անտէնն իւրեանց առն շիներ. ու
վստահ 'ի ներս գնացեր:

Եւ սեց ամիր մուսէն և ողորմ ելաց
և ասաց թէ ունի խելք և միտք
և իմաստութի նա' կարէ ճանաչեր
զայս կեանքս. որ ամէն մեծութի ոչ
ինչէ: Եւ կայր 'ի յայն կայսրին մէջ
ըն զուպակ մի. և բոլոր զուպակին.
Դժ գերեզման կայր մարմարիսնեա'
քարիւ. ազգի ազգի գունով: Եւ
գրած էր 'ի վր տապաններուն փո
րած և ոսկով լցած. յունարէն գը
րով շատ ողբեր. և գերեզման մի ու
րիշ կայր զարդարած. զոր կարդաց
ալևորն: Եւ գրած էր ոչ ք շայս:

Լ՛հաղ Թէ քանի կացի կենդանի ու
վայելեցի . գործոյս ամէն ՚ի հաշիւ .
ասա՛ ժամ է հաս որ խնդրի . Քանի
կենդանի էի նա՛ բազմաց պարգևք
բաշխէի . ես զիս անմահ կարծէի .
նա եղա՛ սական մի փոշի :

Լա- գրածէր լէ հեճոռպին գերեզմանէ որ
՚ի մահոն ժամանակն ասաց իւր անցիկն .
Քանի որ յայս կեանքն եկիր . նա՛
կացեր զամէնն ՚ի յերեր բերթերու
բազում քաղաք . դու զամէնն այլոց
խլեցեր . հիմիեւ խաւար դարձեր .
որ որդունքն ՚ի քեզ կան իկեր . դու
ես պատասխան տալու . զոր ՚ի յայս
կեանքս զրկեցեր :

Յայնժամ մտան ՚ի մէկել դուռն .
և գրած էր երբ մահն երեկ իմ զօր
քըն չլըցին Թափել զիս յիմանչափ
մեծ ութէն ոչ կայր այլ մարդ . իմ
բաժին պատանքսէ տանօղքս և փո
րողքս , և գերեզմանս . և ամէն մե
ծ ու խս կորեալ և այլոց մնաց . և արդ
իմացայ որ մըմնոյս սէրն կորուս զիս
ԺԷ երբ

երբ իմ անչափ մեծ ունիս ինձի դէմ
չեկան . նայ այլ մարդ կա՛ որ այս
սուտ կենցաղուս կու հանայ: Եւ
մըտան ՚իմէկալ ղուպպէն զարմանա
լի շինունածք զարդարած էր: Ո՞վ
եղբայրք ան միայնէ անմահ և անեղ
մի վստահանայր ՚ի սէր աշխարհիս.
զի խաբէութի և սուտէ . և երազու
նման: Եւ գրած էր ողբս այս:

Եւ յիմ սիրելի եղբարք . աչք ՚ի յիս
տվէք զենեհար . գեմ շատ ՚ի մէկ
տեղկեցաք . և եղաք ուրախ հա՛նա
սար . ՚ի յայս տեղսիմ խիստ գումար .
զի դժոխքնէ մութնու խա՛նար .
զիս տեսէք արէք ձեր ճար . զենե
հար հազար զենեհար:

Եւ գրած էր թէ ով զիս տեսնու .
թող վայ տայ ինձ . զի ես թագա՛ն ո
րէի հզօր և յաղթով ՚իպատե՛րզմի .
այժմ լա՛նէ մուրացկան մի քան զիս:

Եւ գրած էր ողբս այս:

Երբ ես կենդանի էի . տերէի հազար
քաղաքի . բերթերու գա՛նառ բա
ժի
զում:

զում. անհամար և անթվելի ինչ ձի
ուռնէի պէտաւի և զարմանալի երբ
ես ՚ի տանէն ելնէի. ի հազար
մարդ հեծցընէի:

Եւ անչափ ոսկի և արծաթ. ակ և
մարդարիտ ուռնէի որ պրծերով լցե
րէի. և ես ապրեցայ ԾԺ տարի. յան
կարծակի մահ անկաւ ՚ի յիմ դար
պասն և չմնացաք. ոչ ծեր և ոչ աղա
հանց խըստեց մահն որ թաղել ոչ կա
րէաք բայց թէ զմեծամեծսն թա
ղէաք. և զայլսն յարտաքս ձգէաք
ընկենւաք: Եւ այն ես յաղթեցայ
և վախեցայ. և զայս բաներս գրեցի.
որ զմեր խեղճ մահս լսէք. և դուք
խրատվիք. լսելով զհասեալ բարկու
թիւն ՚ի վրձ մեր. և խընայէք ՚ի ման
կութեան ձերոյ:

Եւ մեծ թագաւորէի զօրաւոր հը
զօր և արի. շատ գանձ և գումաշ
ուռնէի. որ չուռնէր մարդ ՚ի վրէրկրի
Օ հոգիս իմ անտես արի. ու զնչից
շահս թուէի. զամէնն այժմ այլոց
ԺԴ ԹՈ

Թողի • մէն զպատանք առի գնացի •
Ս'եռայ ես որ տէրէի բարու Թիս
զոր դուք տեսանէք • մարդու հանց
ազվոր վայելք չէ հասեր ումեք հայ
րենիք • նա' դեռ զրկէի զայլոք • մինչ
որ մահն անց Թէ հերիք • մոխրիսեմ
հաւասար եղեր • այ եղբայրք իմ
դուք մի խաբւիք •

Լճ երբ ցաւն զիս նեղեց կոչեցի
զիման զամ • և ասի Թէ օգնեցէք
ինձ • Թաքեցէք զիս 'ի մահն • որ
կու բաժանէ զիս 'ի ձեզանէ • Լսա
ցին Թէ չար կամ ունիս ասայ որկըռ
վինք • Թէ չէ 'ի հետ այ ով կարէ կըռ
վիր • մահն առջի ամենեցուն կայ • Յոր
ժամ որ զայն լեցի • նայ կայ 'ի այ
հրամանքն • բերել տո՛ւի զապրանքն
իմ զամ կուտեցի ոպ բլուր մի • և ա
սացի դանձիս իմ Թէ գնեցէք զիս •
որ մէկ տարի մալ ապրիմ • նա' անցին
Թէ այդ բանի այլ ճար չկայ • նա' կա
ցի այ հրամանքն և արձակեցի զհո
գիս • Լճ ազ զմեռած անուսիմ որ
ԺԵ
այլ

այլ ոչ յիշո՞ւի. Թէ՛նոր որդի գաղա
տայ. և Թագա՛նորի որդի շատայ:

Օ ինչ որ գանձ ու ղումաշ կայր
ինձ. զոր մեղօք էի ժողովեր. չկարց
ինձ մէկ օգնել. կամ սակա՛ն միցա՛ն
փարատել. Տուք զայս կեանքս և
զայն առէք երբ մահուն ճարակն է
հատեր. չկայ հողածին ծնունդ.

կենդանի որ զինքէ պահել:

Եւ բռքամի կայր 'ի մէջ դարպասին
ոսկի արծի՛ն մի դրած էր 'ի վր' նր.
ջուրն 'ի բերանն 'ի վայր Թափեր.
տակն սալեր կապած. արծաթ և
ոսկէ ջրած. և գրած էր Թէ ով որ
տեսնու զայս վայելչուի. նա Թող
փառա՛նորէ զանձ. հրամայեաց և նր
հրամանա՛նն սրբաջինջ եղաք. վայ
մեզ որ զբարին չըգործեցաք:

Եւ գրած էր ոչ ոս այս:

Եւ մարդ յիմացիր զայս կեանքս. և
գիտես որ չէ մնացական. զմայն մե
ռացերէք դուք. ամենիսէ ասպնձա
կան. Օ որ ինչ աղամայ 'ի վեր. եւ

Լ:

Ի՞նչ

ԺԷ

Ժներ ամէնն ու գնան . Զանայ որ
բարի գործես . որ անտէնն չը
լինիս փոշիման :

Լա գնացի 'ի Գողան . և գրածէր Թէ երբ
'ի սեղան նստի . Ժն մարդ ծառայութիան
նանգէր առաջի իմ . ԲՃն մարդ յիմ չի
լան ինչ քարէր :

Տիմի ես 'ի հող դարձեր . կերակուր
որդւնցեմ եղեր . և իմ յանհուն բա
րեացն իմ դատարկ 'ի բաց մնացեր :
Ետ մարդ անարժան ոտքն . զիմ
տունս եկեալ կոխեր . ու այլ մարդ
յիսնէ չե վախեր . աղքատաց նման
եմ եղեր : Լա մարդ որ դու դաս առ
մեզ . լացու զմեր կորուստն որոնէ .
մահ մարդոյն դիւրան հասանի . ըզ
կեանք մարդուն դիւրան կուփոխէ
Ս'ինչ մեք կենդանի էաք . էով մեզ
որ արժանիէ . Տիմի ամենէն 'ի զատ
որ անանց հուրն զմեզ կայրէ :

Գնացայ 'ի հիւզ Գողան . և գրածէր 'ի ՎԹ
Գողանն ոսկէ գիր շար իբար և ողբս այս :

Լայս աստընվորիս բարիքն չէ իսկի
Բ Ժ Ե մարդ

մարդու մնացանքն մահն զօրանոր կու
գայ . և տանի 'ի հող շինտան : Որ
չափ որ անհոգ լինիս . թէ շատ գանձ
ունիս գայիբան . մահն գայ քակտի
տանի որ իսկի հեաքն չերևան :

Ի՜շ Դուռն գրածէր ոչ Բա այս :

Յիմար ադամայ որդիք . որ աշխարս
էք դուք շփացեր . տեսէք թէ քա
նի մարդիք յադամայ յանուրսէ ե
ղեր : Եւ անմխիթար գայլեօք ըզմա
հուն օրնէք մոռացեր :

Եւ թէ Դուռն գրածէր :

Եւ յա սատընվորի բարիս . երազի ին
քըն նմանէ . ու վայ նր ասեմ . որ զայս
կեանքս խիստ կու սիրէ : Եւ րանի
տամ այն մարդոյն որ անտէն 'իտուն
կու շինէ . որ երբ այս կենացս ելնէ
յայ ինքն չամաչէ :

Ուրն Դուռն գրածէր ոչ Բա այս :

Իսկ ոչ խրատին մարդիք թէ մահուն
օրն գալոցէ . մոռնան զահագինտան
ջանքն որ զբազումըս անդ ժողովէ :

Օ , ինչ որ աստ գործել լինի անդ
ԺԸ մէ

մէկին ալ չարէ. ջանայ դքեզ ՚ի զատ
պահել ՚ի մեղաց և ՚ի չար գործէ:
Լա՛ւ գրածէր թէ տեսէք զայս ամ
շինո՞ւածս և գանձուս որ տէրէի.
նստէի յայս զուպպէս և վայելէի. և
՚ի յայս անուշահոտութե՛ն անմահա
նայի. տեսէք զայս ամ թագաւորու
թիւս որ տունէ գազանաց և թռչնոց.
բանի զայս տեսանէք մի հպրտանայք
և մի գործէք չար. և մի նախանձիք
՚իսուտ փառքն. յիշեցէք զայն որ հա
մարս տալոցէք առաջի քի: Օ ի ոչ
կարէք պատճառել. թէ ոչ գիտցաք:
Լա՛ւ գործէք ոչ քաջս:

Լըրիք դուք այս տեղս եկէք. և տե
սէք զիս ՚ի մէջ հողին. թողերեմ զա
մէնն ՚ի բաց նա՛ համար կուզեն իմ
գործին. Լացէք զամէնի պարոնս.
որ տէրէի ա՛լ քաղաքի. այսօր զամէն
են զրկած ակն ունի հոգիս գեհենի
Լա՛ւ այլ շատ ողորմ բաներ գրածէր
թեթեւացուց ամիր մուսէն զաշխար
հըս իւր աչքն. և գնացին յայն զուպ
պէն

պէն որ քան զծուխն երևէր. անչափ
բարձրէր արձիճով կապած. զայն տե
սան և զայլոց վայելչութիւն մոռացան.
քանզի յորմերն ամէնն ոսկով շինւծ
դռներն ամէնն ծխանէ լիքէր մենք
չկարացաք գրել. յայն ղուպոյնին
մէջն սեղան մի դեղին ակունք ճո
հէր ոսկով և մարգարտով կազմած.
Եւ կայր ի նմա Գ Բ ակն շուրջ և բո
լոր սեղանոյն ճ թիզէր. և գրած էր
Թէ ուրեն նոքա որ զո՛ւարճանային
շուրջ զսեղանովս. և բոլոր սեղանոյն
լուսատու ակունք էին:

Եւ գրած էր ոչ Բ այս:

Եւ ատ Թագաւորք իսմայ ճաշակեալ
են այսօր մէկ մի չերևին. և այն որ գա
լոցէ աստ. գնալոցէ անհնարին. փո
խին ցեղուցեղ աւուրքս. ուր լինի
ամէն մեռանին. անտէր Թողին զայս
սեղանքս և լալով ելան գնացին:

Եւ Բիւլ քին գրած էր շայն ոչ Բ գեղեցիկ:
Օ ինչ կայ գեղեցիկ շինուառս մա
հըն գայ զամէնն խափանէ. ճարտար
Բ
դու

դու մտիկ արէ . Թէ սոցայ շինողքն
'ի յուրէ : Նոյնպէս արժեցոյ զաշ
խարհս . և մտօք զինքն դու քննէ .
և երկնաւորին տուր փառք որ ամէն
Հոգւոց նա տիրէ :

Վե գրածէր Թէ այս սեղանս զում
րութ Թագաւորինէ . և Թագա
ւորէ կերակրեալ 'ի վր սեղանոյ սր .
և ամէն Թագաւորաց անուններն գը
րածէ . և ամենեքեան անցեալէին 'ի
ներքոյ հողին : Վիր մուսէն հրամա
եաց հեծելին Թէ գրեցէք զայս բա
ներս և մնացին յայն զուպպէն քօր
և ապա գնացին քօ անուր ճանապարհ
և տեսաք բարձր բլուր մի . 'ի վր բլը
րին կայր ձիաւոր մի պղնձէ . և գրա
ծէր 'ի վր ըռւմպին Թէ կալ զիս . և
Ժ հետ 'ի շուրջ ած . ընդ որ դադա
րի . այնէ պղնձէ քաղաքն : Վրարին
ոպ և գրածէր . և զորդեցաւ ըռւմ
պին ծայրն ընդ արեւմուտս . և գնա
ցին ընդ այն և անցան դիժր կապան
մի . և տեսան բարձր բլուր մի քարէ .
և



և այն սիւնին ծայրն կայր կենդանի
 մարդոյ ձև թաղած յայն սիւնն մին
 չև ի մէջքն և ունէր ք. թեւք մեծա
 մեծք. ձեռքն ուն առիւծոյէր մազն
 ուն ձիու ձար աչքն մեծամեծք և կար
 միր զէտ զբոց ի վառ և կերպրանքն
 ուն թուխսաթ. Վոչէր ահագին ձայ
 նիւ. և ասէր փառքայ անեղին և նմա
 Տին բարձրելոյն և միշտ կանգանուոյն
 որ զայս անտանելի չարչարանքս ի վր
 ինձ էած. իբրև տեսան զարմացան:
 Եւ ասաց ամի մահէն զուրա շայս ի վր նր:
 Օ արմանք մենք այսօր տեսաք չէր
 տեսեր այլ մարդ հողածին. կենդա
 նի մի թեւաւոր որ յաչացն հուր փայ
 լէին. կերպարանքն էր ուն թուխ սա
 գի. փառք ասէր անմահ արարչին.
 զայս չարչարանքս որ ինձ երեստ. չէր
 կրեր այլ քաջ անմարմին. և գնա
 ցին ի մօտ նորա:

Եւ հարց ալևորն և ասաց. ովես դու
 կամ ովէ դրեր քեզ այդ սիւնդ.
 ասաց թէ ես այն դէն եմ որ ի հետ
 քե

սողոմոնի պատերազմեցայ . իմ անու
նըս տամշերէ . ես աստ կամ չարչարա
նըս հրամանաւ սողոմոնի . մինչև այ
հրամանն հասանէ առիս . Լսէ ամիր
մուսէն վասն էր եդ զքեզ սողոմոն
յայդ չարչարանացդ . Լսաց քաջն
կայր Թափէոր մի աբտիլ ազիզ անուն
ինձի քուրոջ որդի էր . Լն ունէր .
ք կուռք . կանանց զուարթ և եա
քութ . և ես սպասանորէի կուոցն .
Սեր Թափէորէին բազում հեծել
կայր . և ոչ ոք կարէ զդէմ ունել նը
մայ . և բազում քաջք ՚ինք հրաման
քընէին . Լն կայր մեր Թափէորին
դուստր մի անօրինակ զարմանալի .
պատկերաց տէր . Յուզարկեաց սողո
մոն առ Թափէորն մեր . և ասաց տուր
զքո դուստրն ինձի կնուի և կոտո
րեայ զկուռսդ քո . և հաւնայ ան
իմ . որ արար զերկինս և զերկիր . Թ է
զայս առնես եղբայր լինիս ինձ . ապա
Թ է ոչ պատրաստեայ զքեզ ՚ի պատե
րազմ . որ դամ տամ զմաճն քեզ բա
Թ Գ Ժին

Ժին։ | սեց մեր Թագաւորն և բար
 կացաւ . հոչեաց զիւր հեծելն ամ և
 եհարց Թէ ինչ տամք պատասխանի սո
 ղումնի։ | Սացին մեծամեծքն Թէ 'ի
 մարմնաւորաց քան զքեզ ոչ կայ մեծ
 դու մեծ ես քան զսողումն։ | Եւ այց
 մուտ դու առաջի չոծոցն . աղաչեաց
 զնս . Թէ օգնեցէք ինձ սողումն գալ
 կամի 'ի վր մեր . առ 'ի կոտորել զմեզ։
 Յայնժամ ես անբայի տխմար . և հը
 պարտ և շփացած յիմ մեծու Թիս և
 ոչ ճանաչէի . զսողումն դաւ Թի որ
 դին . ես հարցի զկուռսն վս այս բա
 նիս պատասխանի տո՛ւին Թէ մի վա
 խէք 'ի սողումնէ արքայէն . ես կարո
 ղեմ առնուլ զգործ սողումնի . և
 տամ ձեզ 'ի յաղթու Թի։ | սեց աբ
 տիլազիզ Թագաւորն և խիստ ուրա
 խացաւ . և սողումնի էլ չին ծեծեց .
 և շատ վատ ասաց սողումնի . և ասաց
 պատրաստեայ զքեզ 'ի պատերազմ ես
 տամ քեզ բաժին ըզմայն։ | Եւ այց էլ
 չին և ասաց սողումնի զամ։ | Եւ սո
 ր

ղումն պատրաստեաց զինքն ՚ի պատե
րազմ. ժողովեաց զզօրքն. և քաջք
բազում. մարմնաւ որք և անմարմինք.
նք նաց. և բիւրք բիւրոց. օձ և
վիշապք. գաղան և անասունք. և
թռչունք. և ուսուց նց ռալ կռվին:
Եւ եկեալ սողումն յաշխարհն մեր.
և ուղարկեաց էլ չի առ թագաւորն
մեր. թէ եկի ՚ի քո աշխարհս լսէիմ
հրամանացս. և եկ առիս կոտորեաց
զկուռսդ քո. և հաւատայ յաճնիմ
ոչ կարեն դաքայ պահել զքեզ ՚ի ձե
ռաց իմոց: | սեց մեր թագաւորն և
կռւաւ զէլ չին սողումնի. զերեսն սեւա
ցուց զէլ չին. և ուղարկեաց առ սո
ղումն. թէ պատրստ լեր որ կռվինք
տեսնունք թէ որ աճ կարողէ և յաղ
թող. Գնաց էլ չին և ասաց սողումնի
զամ: Յայնժամ գնաց սողումն ՚ի
դուր դաշտ մի. և իմ թագաւորն ՚ի
դուր լեառ մի ժողովեցան զօրք բա
զումք անթիւ և անհամար. և քաջք
բազումք և յաջողեցան կռիւ: Եւ
ի ե

հրա

հրամանաց սողումն գազանացն . որ
կէսն ընդ աջմէ կային և կէսն ձախ
մէ . և Թռչնոցն հրամայեց . որ բարձ
րանային 'ի վր մեր ճայթելով . և կոցե
լով ծրծէին զերեսս մեր . և չտային
բանալ զաչս մեր . գազանացն հրամա
նաց Թէ ըզգրաստնին լափեցէք և
փախստական արարէք . օձիցն և վի
շապացն հրամայեաց Թէ ոտմներուն
մէջն մտանէք և պաշարեցէք : Եւ
սողումն նստելէր ոսկիակազմ Թախտ
օձուն վրա զարդրած ազգի ազգի :
Եւ հրամայեց սողումն որ բարձրա
ցուցին զԹախտն որ հայէր 'ի վր պա
տերազմին : Եւ հրամայեաց սողումն
իւր վէզերին . որ կայր յիւր աջոյ դի
հըն . և այլ հեծելք ընդ անմարմինք
ձախմէ կային : 'Եւ ին կռիւն քօր . և
քօր գիշեր . և ով կարէ պատմել զահա
գին պատերձմն . Թէ դըրդումներն
և զգոռումն . և քան զամէնն յառաջ
ես յաղթեցի սողումնի հեծելն : Եւս
պարծեցայ Թէ զսողումնի վէզերն ա
նի

միրաթ բերեմ առաջի իմ պարոնին
կանչեցի և խառնեցայ ՚ի հեծելն ա-
սելով. թէ զայլ ոք չուզեմ բայց ըզ-
բեզ ամիրաթ. եկ զի տեսցուք զիրար
և նա՛ և ս գոչեց ահեղագոչ ձայնիւ
և ինձ այնպէս թվեաց. թէ երկինքն
պատառեցաւ և փլաւ ՚ի վր իմ բեկե-
ցաւ մէջք մեր հեծելին ՚ի սաստիկ
ձայնէ նր. և երբ խառնեցք ամէնքս
թռչունքն չտային մեզ աչք բանալ.
գազանքն և սողունքն ամբողջութիւն
զմեզ. և բազումք մեր զօրցն մեռան.
ապա առաք ամիրաթն յիրար. վեց
ժամ կռվեցաք մինչ որ ձանձրացաք
երկուս. իմ զօրքն փախէն յամիրա
թէն. և ես կամէի որ բաժանէի զիմ
զօրքն. տեսաւ սողումոն զիմ դառնա-
լըն. հրամայեաց թէ կալէք զայդ
անհաւատդ. և այնպէս խստացաւ
կռիւն. որ ոչ հայր որդւոյ ողորմէր.
ոչ եղբայր եղբօր կրէր օգնել փա-
խեայ ես և ամիրաթն անկաւ ՚ի վր
իմ. ես ասացի ամիրաթին երդմնե-
ի է
ցու

ցուցանեմ զքեզ յամ կենդանին.
 որ տանիս զիս առաջի սողոմոնի ար
 քային. ըսպանանել չտաս. և տարաւ
 յետոյ և ետ բերել զայս քարէ սիւնս
 և զնտանեաց զիս աստ երկաթիւ. և
 արձիճիւ. և պղինձով. և հրամայեց
 ամիրաթին որ շալկեաց զիս քարովս
 և եբեր յայս լեռս որ կու տեսա
 նէք: Ասաց ալևորն այն պատերդմն
 զինչ եղև. ասաց քաջն. յորժամ ամի
 րաթն զիս փախուց. և իմ թագւորն
 փախեւ: Սողոմոն յետևանց ինկաւ
 զիմ թագաւորն փախուց ըսպան և
 զօրսն կոտորեաց. առին զկղզին. և
 զկուռսն ջարդեցին: Օ թագաւո
 րին դուսարն էառ սողոմոն իւր կը
 նուի. և զերկիրն ամիրաթին ձեռն
 եդ. և ինքն դարձաւ ուրախուի ի
 տունն իւր: Ասաց ամիր մուսէն օրհ
 նեալէ ամ որ ամ տեղիս փառաբանի
 անուռն նր: Ահարց զքաջն թէ զայն
 տեղն գիտես որ սողոմոնն զդուս ի
 պղնձէ կուժն ելից. և իժովն ընկեց.
 Ի՞նչ

Ասաց քաջն թէ մօտէ 'ի կուռկուռ
 եայ լեառն 'ի ծովն: Ան բնակեալ
 են յայն լերինն մարմնաւ որ սև մար
 դիկք: Ան ետ քաջն զնշան լերինն
 և զպղնձէ քաղաքին: Վնացին շատ
 օր . և իջան 'ի դաշտ մի . որ կայր ծառ
 և տունկ . և պտուղն անուշահամ .
 գետ և աղբերկուռք և ջուր քաղցր .
 և անտի գնացին ին օր . և ապա հա
 սին 'ի պղնձէ քաղաքն . և եր ուն ըզ
 հուռ 'ի վառ: Ասաց ալև որն այն է
 պղնձէ քաղաքն: Ան իջան 'ի դու
 րն քաղաքին և ոչ գտին զմուտըն .
 և հեծցուցին զմարդ . յուղան և
 շրջեցան ընդ պարըսպաւն . զօր և
 զգիշեր . և ոչ գտան այլ տեղ որ
 ցած էր քան զայն տեղն որ իջեալէին
 պարիսպն . ամէնն խնդման սև քա
 ղեր . և այնպէս թընէր ուն միաբերթ
 ն կանգուն բարձրուի էր . և ին թիզ
 լանքներ պարըսպին . և ունէր ին
 դուռ 'ի մէկ դռնէն 'ի մէկալ դուռն
 ոչ երևէր մարդն: Յայնժամ է առ

ամիր մուսէն և զտալիպն և զալւորն.
և գնացին 'ի բարձր լեառ մի որ մօ
տէր քաղաքին հայեցեան 'ի վր' քա
ղաքին. և ասացին թէ ոչ եմք տեսել
այսպիսի շինուածք 'ի վերայ երկրի:
Եւ բուն ճգէր 'ի վերայ պարսպացն
Յետ դարձան և գտան տապանք մար
մարոնեայ գոյն զգոյն. և գրած էր
'ի վր' սև փորված ոսկով լցած:

Եւ գրած էր ուրիշ այս:

Եւ մարդ ադամայ որդիք դուք բերէք
զխելքերա 'ի վ. մտօք յիմցիք սուտ
կեանքս. և զմահ գալիքս 'ի վր': Եւ
քակէ զամէն շինուածք որ շինու արն
ջիմանայ. մեզ կայ պատասխան տա
լու. ամենի որ մէկ չի մնայ:

Եւ 'ի հիշու գերեշման գրած էր ուրիշ այս:

Եւ ադամայ որդիք դուք չի լինի որ
զանձ մոռանաք. ան յիւր բարեացն
համբերէ դուք զայն չիմցաք: Եւ ուր
դարձիք 'ի պիղծ գործ ոցն որ անանց
հուրն չիմանաք. մենք 'ի մեր յին հուն
բարեացն քան զպատանքն այլիւք չի
տարաք:

Ս' էլաւ գերեզման գրածէր ոչ քա այս:
Լ' աղամայ որդիք Թափեցէք զգի
նին 'ի ձեզնէ. զմարմինդ կու պա
րարես. դու հոգւոյդ բաժին պատ
րաստէ: Որ երբ ճանապարհ ելնես.
նա՛ դողումն զքեզ չի պատէ. հազըր
և պատրաստ կացէք. որ երկան
դուն չարգիլէ:

Լ' գրածէր ոչ քա այս:

Գ' իտացիք քչիկ քչիկ. որ գնաց մեր
օրս 'ի մաղպուն. քանի 'ի մեզ զարմանք
Թ՛վի. գնալոցենք ներքև հողուն:
Լ' թուռն և պատրաստ կացէք. դա
տողին առէք պատասխան. վայ այն
աղամայ որդւոյն. որ չունի իսկի
աս մահուն:

Ս' էլաւ գերեզմանն գրածէր ոչ քա այս:

Լ' յիմբարերար ան աղաչեմ որ զիս
խրատես. ծառայիս քո միտ դնես զիս
իմ մեղացն ազատես: Ու տաս ինձ
բարի խրատ. և զիմ շատ մեղքն դու
չյիջես. դու ես ողորմած ան. ընդ
մեղաց զմարդն չի դատես:

Լ' ան

Ի

Դիմալ գերեզմանն գրածէր ոչ քա աշա :
 Լ' աղմայ որդիք զայն տարեր զինչ
 աստէն ունի . և շատ ցեղուցեղ դա
 տի . ասա Թողու անաէն չտանի . Վի
 տեմ սողոմոն ասաց . զորն կերայ , և
 զորն խաբեցի . զոր տունի ձեռքս աղ
 քատաց զայն գտի . զոր Թողի զայն
 ես կորուսի :

Օ այս բաներս որ գրած էր զամենն
 գրեցին . և եկին ՚ի Տեծեւն կա
 պեցին սանտոխտք . և եդին ՚ի պարիս
 պըն անց մէկ մարդ մի Թէ ես ելնեմ
 երբ ՚ի պարիսպն ելան . ծիծաղեցան
 ծափէ զարկ . և ասաց շապաշ շապաշ
 Թէ ինչ աղվորէ քաղաքս . և անկան
 ՚ի քաղաքն և մեռան : Ս' էկ մարդ մի
 այլ երեկ ասաց Թէ ես ելանեմ . այն
 մարդն Թեթեալսեւք էր չկարաց ըզ
 խելքն ՚ի վր' պահել : Լ' սաց ամիրմու
 սէն Թէ խելաց բան չէ . որ զիւր ըն
 կերն մեռած տեսանէ և ինքն այլ չը
 վախենան : Լ' պահ մարդ ՚ի պարիսպն
 ելան . և ամենեքեան ծիծաղեցան .

Ժափ զարկին անկան 'ի քաղաքն և մե
ռան։ Ու շաթափեցան ամիրմուսէն
և ելաց դառնապէս։

Եւ ապա շայս ողբս 'ի վերայ պարսպին։
Պարիսպ ես դու աննման. ընկեցեր
'ի վայր զամ. մարդ իքս որ 'ի քեզ ելան
քան զծաղիկ 'ի վայր թափեցան։
Զեմ տր ես ամի. լինի թէ չարին թը
նեցան. հեծելքս հանաւար կու դո
ղան յայս բանէս քաղաքս աննման։
Լսաց տալիպն ես կամիմ գնալ վս
հեծելիդ. Լսաց ամիր մուսէն գնա
վս հեծելիդ. և վս խալիֆային սի
րուն. ապայ իմ բանիս մի գնար։
Յայնժամ տալիպն զիւր կէս մալին
այ խոստացան. երբ 'ի պարիսպն ելան
զամ յիշեաց. ծիծաղեցան ծափ է
զարկ. անկան 'ի քաղաքն և յուշաթա
փեցան։ Յայնժամ ամիր մուսէն ե
լաց յոյժ զի գիտաց թէ մեռան. տա
լիպն յուշ եկան ձայն ետուր թէ մի
լար, ես կենդանի եմ. տեսան տալի
պն 'ի մէջ դրանն կայր ձիանոր մի.

և գրած էր 'ի վր ձեռին . Թէ կալ ըզ
 պորտիս բւեռն . Ժք դիր 'ի շուռած
 և ապա բանաս զդուռդ կարդաց տա
 լիպն արար զոր գրած էր . և եբաց ըզ
 դուռն : Ճայնժամ էառ ամիր մու
 սէն զկէս հեծելին . և 'ի քաղաքն մը
 տաւ . և շուրջ եկին 'ի քաղաքն տե
 սան զի մեռած էին ամենեքեան . և
 փակած շուկայքն ամէնն սալ կապա
 ծ էր . և ջուրն շուր կայր 'ի վր . և ա
 մէն փողոցի գլուխ բրքամի շինած է
 և ոսկի առիւծ մի 'ի վր . և ջուրն թ
 բերանն ելանէր . ծաղկունքն անու
 շահոտ և գեղեցիկ . մրդիքն 'ի շուկ
 պէն նստած էին . ոսկին և արծաթն
 ակունքն և մարգարիտն կուտած էր
 և տէրքն 'ի մօտն մեռած էին և փտած .
 յերբ մարդն ձեռն հասուցանէր .
 նա 'ի հող դառնային : Ճայնժամ մը
 տան զալամ քարոցն . և ոսկերջնոցն .
 'ի մագործնոցն . և 'ի խաղինայքն
 զամ ոսկով և մարգարտով զարդարա
 ծ էր . ով որ տեսնոյր նա լայր սրտէն

զգարն հանէր որ 'ի միջէն ելանէր .
 Յայնժամ ելան անտի . և գնացին 'ի
 Թագաւորին դարպասն . քի դուռ
 ունէր . քան զբերթի . ան պղնձի . ան
 արծաթի . ան ոսկի . տեսան զարմանա
 լի շինուածք . որ այլ չէր տեսեր աչք
 մարդկան . զայն որ նմանուին ճկա
 րացին գրել . Լաւ 'ի դուռն դարպա
 սին կայր ձիաւոր մի , 'ի մօտն բրբայ
 մի . և 'ի Ե դիհաց ջուր ելանէր 'ինը
 մանէ . յառջևն ծաղկնոցէր մրդա
 բերած ծառ և տունկ բազում և
 Թէ մարդ 'ի մէջն մտանէր նայ անու
 շահոտուէն գինով ցնէր . և վարդն
 ըռումպի չափէր . կանգներ . և մար
 դիքն 'ի շուքն մեռելէին : Յայնժամ
 մտան 'ի յայն զուպպէն . որ քաղաքն
 ամէնն յառջև նէր :

Լա- ասաց ամիրտասէն զայս ոչքս 'ի վերայ
 քաղաքին :

Լաւ աղ քեզ աղվոր քաղաք . որ չըկայ
 'ի քեզ կենդանի . ամէնքն են 'ի հող
 դարձեր . մարդ չկայ բարիքնէ 'ի լի .
 ԼԵ ԼԱՎ

Լայ թէ չէաք տեսեր • սց խեղ
 ճըն 'ի յայսմ վայրի • վախեմ թէ այս
 պէս լինիմք • քան զսոքայ ողորմուլալի
 Տեսան 'ի տէրկեաճն ազգի ազգիսը
 Լէ՛՛՛ կախած • ըռումք և չարխի ա
 ղեղ լարած • և թըրեր • և բլատկի աս
 պարք • և քէշիկ • երբ 'ի դարպասն
 մտան • տեսան մարդիկք նստած և
 մեռած բայց փտած ոչ էին • կա
 շին սևացեալէր 'ի վր •

Տեսաւ ամբոնսն զարմայաւ • և ապա
 շայս ոչբս •

Եկայք նոր զարմանք տեսէք • որ ե
 ղաք մեք ան միսիթար • լա՛ն էր թէ
 չէաք տեսեր • զայս տեսիլս 'ի լաց մեզ
 արար • Ես փառք արարչին ասեմոր
 ինքնէ ան բարերար • մի թէ յարու
 թե՛ անուրն չձգէ 'ի հուր շիխանար
 Պանացին 'ի մէկալ դուռն տեսան
 ըզքէմէրն բարձր • և զարմանալի
 խատւածքն ամէնն կարմիր ակունք
 էին սր զնմանութիւն գրեւ ոչ
 կարացաք •

Ի վերայ շէմն գրածէր ոչ քա այս :

Լայս դրունս գեղեցիկ աղվոր . գո
վելն մեծ արքայական . ոչ կարէ շի
նել այլ քան զաս . կամ ՚ի յայս շին
ւածքս ինման : Լայ վայ դուք սոցայ
տունէք . որ չեղաւ նայ մեզ բնակա
րան . գնացաք և աստիժողաք . զանցա
ւոր շինունածքս ամ :

Իներս մտան . զ սիւն կայր ՚ի մէջ
դարպասին . ամ լուրջ . ամ կարմիր . ամ
կանանչ . և գումագէթ մի ՚ի վերայ
սեանցն ՚ի յոսկոյ ձեփած . ՚ի յայն
դուպպէն ոչ քարեղէն շէնք տեսաք .
և ոչ փայտեղէն ամէնն ոսկի և ար
ծաթէր . լ կանկուն բարձրէր սիւ
նըն ՚ի մէջ դարպասին . և ոսկի գում
պէթ մի ի վր . և ոսկի առիւծ մի .
զուգածէր քան զկենդանի . լուսա
ծու ակունք դրծէր յառիւծն երբ
գիշերն լինար . ակունքն լոյս տային
քան զարեգակն : Լաւ տախտակ միոս
կի դրածէր ՚ի վր աթոռի մի . և գեօ
հեր ակունք ՚ի նմա մարգարտով օրի
լէ նած

նաժ: Լճ գեղեցիկ Թագուհի մի
 'ի վր ամբողին նստած, և խալիչայ
 մի փուռ մարգարտով լցած ինքեքլ
 Թագուհուհին. և կայր 'ի գլուխն Թագ
 մի. գեղեցիկ և աննման յօրինած.
 որ զնշան գրեւոյն ոչ կարացաք: Լճ
 'ի վիզն շարոց մարգարիտ. քան զա
 ղաւնոյ ձու. և 'ի միջին լուստու ակ
 մի. և կայր գլխագիր մի նրման սիրա
 մարգիպէս նման գուն զգուն: Լճ
 այն Թագն որ 'ի գլուխնէր. զ ակ
 կայր 'ի նմայ. ան կարմիր. ան լուրջ.
 ան կանանչ զիւմրիւթ. ան լուսատու
 ան նման. որ մարդ ոչ կարէր հայիլ:
 Տեսաւ ամիր մուսէն և խիստ իւրազ.
 այն. և էր Թէ այն անուրն էր մե
 ռած: Լսաց ամիր մուսէն Թէ հա
 ղար փառք այ. որ ես կու ամաչեմ
 'ի նր յերեսն հայիլ:

Լսասաց զայս ոչ Բա 'ի վերայ լազուհուհին:
 Լնգին աննման գոհար. Թող դու
 յերես անպիտացեր. դու քան կեն
 դանի մարդուն. մարմինդ յերհանց

հողէ դարձեր: Վասն զքո աղվոր ա-
ջերտ հողէղէն մարդոյ չեմ տեսեր:
վայ տամ ես ու բերան. քո քաղաքին
որ չէ վայելեր: Եւ զայս տեսեալ
ամիր մուսէն. և երազ ասաց ըզ
մարդուն կեանքն:

Եւ ասաց զայս ողբս ՚ի Ռաֆուհոյն Բերէն:
Եւ զբարբ սիրելիք որ կայք մի խաբիք
՚ի յայսմ աշխարհիս. այս կենացս մի
հաւատայք. օրինակ առէք գութ
զիս: (Ս) Ինչ որ տղամայ որդիք.
ծնանին ամէն դան առիս. բայց ջա-
նայ բարի գործ է. որ չըլինի Թէ ՚ի
հուրն առաքիս:

Եւ ամիր մուսէն ասաց ինչ մադ որ
զայս տեսնու այս կենացս ինքն հա-
ւանի. կամ աստէն իւր տու շինէ.
և ան հոգ իներս բնակի: Չաւտամ
Թէ իսկի մարդէ այն կամ ունիմիտք
բանականի. անբան անասունէ նայ.
խոտակեր և չորքոտանի:

Վերի աղամայ որդիք յէր դատիս
զամէն հետ մեղաց. յիշեայ զահեղ
ԼԹ դա

դատաստանն ու ծեծէ զորտիկդ
և դու լաց:

Օ իս տես և քեզ ճար արայ. ու խա
փան կ'ցիր 'իմեղաց. թէ չէ աներեկ
աւուրն. դուն այրիս 'ի հունն 'ի յա
նանց: Այիմ պատուական դշխոյ.
որ դու ես ողորմու լալի. այս քո ա
նէհուն բարիքդ. ջոգնեցին քեզ
փոքր 'ի շատէ: Սեռար դու 'ի հող
դարձար. և թողեր զամէսն 'ի յերկ
րի. մարդն որ իմաստուն լինի. նայ
քեզնով ինքն խրատի:

Իբրեւ լռեցին ասելու. անց տալիպն
ընդ ամիրմուսէն. թէ երբ այսպիսի
մեծ մարդոյ զաւակ մեռանի. նայաջ
քըն սընտիկ դնես. որ աջքն եռայ.
և զմարմինն զնեն որ փափուկ մը
նայ և չփտի. և կայր առաջի թագու
հոյն. ք մարդ կանգնած. ան սև ան ըս
պիտակ. 'ի ձեռն թափած թուր. և
սև մարուն բլատի մի որ է թօփուզ.
և կայր 'ի գիրկն թագու հոյն տախ
տակ մի ոսկի լաճիվարդով գրած.
Իս կար

կարգաց արեորն և էր գրած այսպս:
Լ'նունն այ օրհնեալ որէ ինքն միշտ
կենդանի . իշխանէ երկնի և երկրի .
արարիչ տր ամի: Լ'նմահ հողածին
չը լինի . բայց միայն ստեղծօղն ամե
նի . ան պէտքէ փառքն աշխարհի .

քան զերազ և մութ գիշերի:

Լ'ս մեծ Թագուհի էի . դուստր Տը
զօր մեծ Թագորի . ունէի իշխանութի
մեծութի մարդ չունէր 'ի վր երկրի:

Լ'այց մահն երբ առիս երեկ . զամ
իրքս ես ատեցի . զայս տեսեալ խրա
տեցարուք . յամ չարէց փախերուք:

Լ'գ գրած էր խրատս Թէ ով զես տե
սանէ Թող իւրն ողորմի . և խրատի .
Դէ տարուէի որ երբ մեռայ . Ս'ն

ոչ 'ի Թագաւորէն վախէ . և ոչ աղ
քատին ողորմի: Ուրէ ադամ որ ամ
իւր ձեռօքն ստեղծեաց . կամ ուրէ

սողոմոն արքայն . կամ աղէկսանդր
Թագաւորն նայ որ տիրեաց . դ կողմ
աշխարհիս: Լ'այց զայս քաղաքս ոչ

կարաց առնուլ ինչ այն մնաց . որ իմ
խա
ձե

ձեռքն տվի աղքատց. դուք որ կեն
դանիք դէք մի թողուք զձեր ապրան
քըդ այլոց ունի և մեք թողաք. այլ
ձեր ձեռքդ յայս կեանքս տունէք.
և զայն կեանքն գնեցէք:

Եւ գրծէր ուրիշ այս:

Սարդն որ իմաստուն լինի. նա և
իւր գործուն ճանաչի. որ զամենն բա
րի գործէ. իջարէն ի զատ նա փախչի
Օ ի հանց մեծութիս է սուտ. և փա
ռաց շուտով կու թափի. ունի թգրք
եղեն. որ յառաջն զանունն ասացի:
Եւ զումրութ թգլորին դուստրն
եմ. դարպասին պրճերն ամեննոսկի
և արծաթէր. և իմեր սարերս քզում
ոսկէ հանք կայ. ակն և մարդարիտն
ի մեր ծովէս կոճ ելանէ. Եւ յոր
ժամ կարդաց ալևորն նայ ամիր մու
սէն իլաց: Եւ ասաց ուրիշ այս:

Ստնվորի բարիքն չէ իսկի մարդոյ
մնացական. բայց մարդն իմաստուն
լինի. որ ձրի բաշխէ զամենայն.

Սարդիք քան զգարնան ծաղիկ. փը
խք
Թը

Թըթին ալվի չորանան . երանի՜ն բե
րան արդարոցն աւուր յարութե,
Յառաջ մեռաւ իմ մայրն . և ես է
տարեկան մնացի . Ժ տարուն 'ի վեր
կալայ զաթոռ Թգլորութե վարեցի . է
տարուն 'ի վեր : Յայնժամ հասաւ
ինձ մահ : Լա- գրծէր "ղբ" այս :

Ուրեն Թագլորք երկրի . որ յառաջ
զաշխարհս շինեցին . քանի քաղաք և
բերթեր Թողին գեղեցիկ շինւածք
ու գնացին : Լորբ մահն 'ի վր եկաւ
յամէնէն դատարկ գնացին . իւրենց
անէհուն գանձէն . հետ իւրեանց
մէկ փող մի չունին :

Լաւ դրածէր Թէ ը տարի անձրև ոչ
եկաւ 'ի մեր աշխարհս . և հատաւ ամ'
ինչ և կանանչ և կերակուր : Յայն
ժամ շատ գանձ և պատուական ա
կունք . և աղգի ազգի շումաշ . ու
ղարկեաց յամ երկիր . նովով շուրջ
եկին . և ոչ գտան կերակուր . դար
ձան դատարկ 'ի տուն . տանին զոսկին
ընդ դէմ հացի տային և ոչ գտանէ
Խգ Ին

ին. ոչ գընով և ոչ անգին. Լորբ ա-
մէն կերակուրն հատաւ. որ մարդ որ
ուժով էր կերաւ զառանց ուժըն.
պարոնն զծնէն ուտէր. և աղքատք
զմիմեանս. երբ ամէն ճարն կտրեցւ
գիտացաք որ յաւ էր բարկո՛ւնին ՚ի վժ-
մեր. յանձն արրաք զմեր հոգիս այ:

Լ- գրած էր զայս իբրաքս:

Խըրատ մի լսէ յիսնէ. այ յիմար խե-
ղք դու տխմար. գիտեմ մեռանիլ
պիտի. որ չըկայ աշխարհիս քեզ ճար
Օ քո սիրտդ ողորմած պահէ թէ
պիտի քո ազգն ՚ի յօտար. ՚ի պահս ՚ի
յաղթք կացիր զի տապաննէ
մութն ու խաւար:

Լ- գրած էր թէ քաղաքս երկնա-
ջափ աստղօքէր շինած: Քան զայս
ամուր քաղաք չըկայ ՚ի վժ երկրի:

Ով որ այ հրամանաւն մտնու յայս
քաղաքս. ոսկի և արծատ առնէ որ
չափ պիտի. ապայ զայս որ իմ վրայ
կայ մի առնուք. ձեր այ սիրուն հա-
մար: Լ. յա չափ ինչս որ յիմ վրայէ

խդ

ինձ

ինձ Թողէք • իմ ամէն Թագաւորու
Թենէս զայս եմ առեր ինձ բաժին •
Լորդմեցուցանեմ զձեզ 'ի յաճկեն
դանին • որ չառնէք իմ մարմնոյս քա
շանք • և կամ զիս յիրար տաք և խո
ռեք • Ո՛վ իմ աղաջանացս լսէ անձ իւ
րըն ողորմի • և ոչ հաբերէ անխեղճ
գործոցն • Լսեց ամիր մուսէն
և շատ իլաց •

Լսաաց ոչես Թագուհոյն վերայ •

Օքարողն զոր դու գրեցեր • իմաս
տուն ճրտար Թագուհի • յայս ժամս
ինձի խեղճ թվեաց • ձեր գալատն
որ ես լսեցի • բայց յայս և անչափ մա
լոյս • մեզ դատարկ գնալ չի պիտի •

Բիւջմի մեզ վայելս առնեմ և թո
ղումք զայլն յուժ հանդիպի •

Յայնժամ հրամայեաց հեծելին •
Թէ բերէք զինչ աման ունիք • և լը
ցէք որ չափ որ պիտի • ալ և մարգա
րիտ և ոսկի • Լսաց փոքր ամիրան •
Թէ ես զայս ինչքս որ 'ի վր Թագուհ
ւոյս է կառնում • և խալի Գային ար
խե
մա

մաղան կու տանիմ: Ասաց ամիր մու
սէն թէ ամ իրօք ոչեմք կուշտ. և ոչ
այնով կիշտանամք. թադուհին ծանր
երդումէ դըրեր խեղճէ: Ասաց տա
լիպն թէ ամ զմալն զոսկին և զարծա
թըն և զպրգեքն և զապրանքն կեն
դանեացնէ տվեր. և ոչ մեռելոց: Այ
տոր պատանքն բաւականէ. հողէ և
'ի հող դառնայ. առնում զայն ապու
քըն և տանիմ խալիֆային արմաղան
Ասաց ամիր մուսէն, զայս խորոս:

Անչ մարդ որ ագահ լինի. նա՛ փու
թով ինքն կու կորի. և ամանաթ աս
եմ մի առներ այիմ սիրելի: Անպար
տեմ՝ ի յայտ բանէթ մի առներ դու
բան խոտելի:

Ասաց ամիր մուսէն թէ իմ բանիւս
մի առնուր զայն 'ի նմանէ. ես անպար
տեմ. 'ի յերդմանէն որ թագուհին
էր գրեր: Յառաջ գնաց տալիպն և
կամեցաւ առնուլ զթագն 'ի գլխոյ
թագուհոյն. իսկ այն սև մարդն որ
բլատիկն ունէր. է՛ զարկ 'ի վր թիկ
Խզ նա

նացն • և ընկեաց զտալիպն • և այն որ
զթուրն ունէր է՛ զարկ զգլուխն և
կտրեաց • Ոսկ ամիր մուսէն զարմա
ցեալ և փախեալ ի զատ • և ամսոսաց
զտալիպն որ կորեալ իւր յիմարու
թիւն և ոչ լսեց խրատու ամիր մուսէ
ին • վսայն պատճառին համար
շիտակ կորեալ :

Օ խրատն որ տվի ես քեզ • չլսե
ցիր այ իմ սիրելի • ով որ չողորմիր
դորայ • նա՛ նմանէ սատանայի : Ո՛վ
շատ գանձ ժողովել լինի • նա՛ իւրմէն
շուտով կու զրկի • ինքն կարօտած մը
նայ • ի գանձէն զոր ինչ ունիցի :

Ե այն ժամ ելալ ամիր մուսէն ի զու
պէյէն • և բարձին ամենեքեան որ
ջափ և կարացին ակ և մարգարիտ լալ
և փերուղայ • այլ և փտան տներով
ձուլ ոսկի • և երբ բարձին ամենե
քեան զմէկ խազինայ մալն և զոսկին
չկարցին բառնալ : Լսցին թէ զինչ
ի պաղտատ մարդ կայ • և գրաստ կայ
զայս մալս և զոսկիս • չկարենան վեր
իւն

ցընել զան ՚ի քաղաքէն: Եւ փակե
 ցին զդուռն և գնացին ընդ ծովեզե
 րն ին օր. և տեսան բարձր բլուր մի.
 և բլին սև մարդիկք, այլադէմք.
 և իտակ բլին քար կայր իջան ամիր
 մուսէն անդ. և փախեան սև մարդի
 քն. շատ ոք ՚ի քարտըկերն մտան.
 և այլք իւերինն թագէն. երբ պահ մի
 կացին եկին սև մարդիքն և հայէին
 ՚ի վր հեծելին: Ղանաց ալևորն ձայն
 եաց և հասկցոյց. և գնացին բերին
 սև երն զթագաւորն իւրեանց մօտ
 ամիր մուսէն. իւրեանց հալան սև
 էր և մազեղէն: Աստան կերան և
 խմեցին և ուրախացան: Ասաց ամիր
 մուսէն ալևորն թէ հարցից թագա
 ւորին մարմնաւորէք թէ անմարմին
 Երբ հարցան ասաց թագւորն մենք
 մարմնաւորենք յաբիրայի որդւոցն:
 Ասաց ամիր մուսէն զինչ հաւատք
 պաշտէք: Ասաց սև ալևորն թէ երե
 ւեցան յայս ծովս մարդ լուսեղէն.
 որ ամ անձն լոյս տայր և լուսաւորէր

զերկինք և զերկիր: Լ՛՛ն մեզ ասաց
լսեցէք պարոնորդիք և ՚ի միտ առէք.
հաւատացէք արարչին երկնի և երկ
րի ծովու և ցամաքի. սարսեցէք ՚ի
նմանէ. զի նա՛ զամ տեսանէ. և նա՛
միայնէ ամ կենդանի. աղօթք մատու
ցէք նմա հանապազ. և տուք ողորմու
թի աղքատաց նա՛ խրատեաց զմեզ և
ուսուց մի ամ պաշտել. և ինքն վե
րացն. լուսեղէն ամպովք յերկինս:
Լ՛՛ն մեք ամէն օր. է անգամ աղօթք
մատուցանեմք. և զամ փռնորեմք.
և գոհանամք զնմանէ: Լ՛՛ն ասաց
ամիրմուսէն զայս բանս:

* Բեզ փառք արարիչ ամ որ ամէն
տեղ օրհնաբնիս. բանին դու բարձ
րեալ ունիս. այլ և ադամայ որդւոցս
զհարեց զատին կամիս. զի ան յերէկի
աւուրն որ լսեն զեկայքն առիս:

Յայնժամ եհարց իսկ Թագաւորն
Թէ այն կժերուն որ սողումն բար
կացաւ դիւանայն. և ՚ի պղնձէ կուժն
էած և ՚ի ծովն ձգեաց աստ գտանի
իսկ Թէ

Թէ ոչ: Ասաց Թէ որ չափ պիտի Թա
մաշայի համար բերեն որսորդքն բա
նամք և տեսանեմք: Ասաց ամիրմու
սէն մենք այն կժերուն համարեմք
եկեր. այսքան ճանապարհս: Յայն
ժամ հրամայեաց սև Թագաւ որն որ
սորդացն որ բերին. Ժք կուժ տուա
լի ամիր մուսէին: Յայնժամ ուրա
խացաւ ամիրմուսէն. ոսկի սնառուկն
եդիր զկժերն. Լըն խիստ պատիւ ա
րաւ ամիրմուսէն սև Թագաւորին
և խիլաթեաց և ետուր նմա շատ ոս
կի. և ակունք և պէտաւի ձիանք:
Ենորհակալեցաւ սև Թագաւորն և
ոչ էառ ասաց Թէ այդ մեզ չի պիտի
ոչ ծախեմք և ոչ հեծնումք մերըն
այնէ որ որս առնեմք զմիսն ուտեմք
և զմորթին հագնեմք. և զանձ փառա
ւորեմք: Յայնժամ ՚ի յորս ելաւ Թա
գաւորն իւր հեծելովքն. կէս հե
ծելին ՚ի ծովներն և կէսն ՚ի ցամաքն
որսացին և դիզեցին և այլ բազում
հրեղէն ձի հանին ՚ի ծովէն. և մար

դադէմ գազանք և անասունք որ ոչ
լինի յայլ երկիր . եբեր և ամիրմու
սէն ետուր : Ապա ամէն ուրբաթ գի
շերն կայր 'ի ծովէն 'ի դուրս ասեղա
գոչ ձայն մի բարձր . որ ասէր փառք
այ . այնմ որ ստեղծեաց զերկինս և
զերկիր . և փառք իւր մեծութեն .
որ զամ կենդանի . մահկանացու է ըս
տեղծեր . և ինքն միայնէ անմահ :
Ասեց ամիր մուսէն . էհարց զսև թա
գաւորն թէ ո՞վ է այն որ ամէն ուր
բաթ գիշեր կու փառաբանէ զամ .
ասաց թագաւորն թէ մեք զինչ ոչ
տեսանեմք . բայց զձայն կու լսեմք :

Եւ ասաց ամիրմուսէն ոչ քաղցր :

Աճարարիչ բարի . քո անունդ միշտ
փառաբանի . տէրես դու երկնի և
երկրի . անսկիզբն անիմանալի . վե
րին զօրքն զքեզ օրհնեն անդադար
և անլուելի . այլ և երկրածինքս ամէն
խոնարհել քեզ երկիրպագանեն :
() այնժամ սև թագաւորն . էլ լաւ
մարդ եղիր 'ի հետ ամիրմուսէին :

Եւ

Եւ

Լ՛ըն ամիրմուսէն շնորհակալ եղև .
 և ողջունեցին զմիմեանս . և տարան
 զամիրմուսէն կարճ ճանապարհով
 յերկիրն ականացոց . Յայնժմ ամիր
 մուսէն շատ ոսկի և արծաթ . և ա
 կունք պատուականք . յուղարկեաց
 Թագաւորին . չէառ Թագաւորն :
 Լ՛սաց ինձ ՚ի յայն կժերուն տուր որ
 տեսանեմ : Լ՛պա ամիրմուսէն երկու
 կուժ ուղարկեաց Թագաւորին . եւ
 Թագաւորն եբաց զբերանն կժերուն .
 ելաւ սև մուխ . և բարձրացաւ յօդն
 և եղև ՚ի կերպարանս գիշատեսիլ
 մարդկան . աղաղակեաց ևասէ . սողո
 մոն սողոմոն որդի դաւթի մարգա
 րէի . այլ չգործեմ զինչ գործեցի .
 այլ կամ ՚ի հրամանսքո , զի գիտաց
 դեն Թէ դեռևս սողոմոն կենդանի
 է : Լ՛ըն յոյժ զարմցաւ Թագաւորն :
 Լ՛պա տարաւ ամիրմուսէն զալկորն
 առաջի Թագաւորին . և ասաց այ տօղ
 վաթաւոր Թագաւոր որ զայս իմաս
 տուն ծերս ՚ի հետ մեզ դրիր . սայտա
րաւ

զմեզ և եբեր: Եւ ամիրմուսէն . Է
բարձած ուղտ ոսկի և արծաթ ետուր
ալևորին: Եւ Թագաւորն այլ խլա
Թեաց զծերն . զամիրմուսէն լաւ
պատուէց . և պէտաւ ի ձիան ետուր .
և ուղարկեաց ի մար: Եւ սեց մարայ
տուն և ուղարկեաց առ ամիրմուսէն .
տարաւ և յոյժ պատուեաց զնոսայ:
Եւ պա ելան անտի . և գնացին յերկի
րըն իւրեանց և հասան ի պաղտատ:
Խալիֆան ի դէմ ելաւ ուրախութե
ւ մեծ ուրախութիւն արարին: Եւ
բաշխեաց խալիֆան աղքատաց . շատ
ողորմութի վննց գալուն . զի ք տա
րի էր ի ճանապարհինէին: Եւ պա խա
լիֆան էհարց յամիրմուսէն . և ա
միրմուսէն սկըսաւ խօսիլ կիրգաւ
Թագաւորին զսողոմոնի կռիվն որ քաջն
ասաց . այլ և քաղաքին զԹագուհուն
գիրն կարգացին առջի խալիֆային
Ուրախացաւ խալիֆան ինց գնալն
և ի գալն . և ասաց տալիպն ի յուրէ:
Եւ ամիրմուսէն ասաց զտալիպին մահն .

ապա ասաց վայ նմայ որ իւր յիմարու
ԹԲ կորեան: Լճ ասաց ոչ քա զայս:

Լճ՝ հայ իմ տիմար վէզեր. յէր կո
րար ընդ վայր ու նանիր. գեմ զիւ
րեանքն դու տեսար. ու զգանկատն
ըստոյդ լսեցիր: Սի Թէ դուն ան
մահէիր որ զնր Թագն խէիր մու
սէն քեզ խրատ ետուր. չլսեցիր
և զքեզ կորուսիր:

Յայնժամ խալիֆան բերել ետուր
զնմ առաջի. զոսկին և զարծաթն

Օ զուժան զակունքն և զմարդարի
տըն. և զկժերն: Լճ ասց խալիֆան
բերէք զկժերն բացին և ելան իկը
ժերուն ուս և մուխ. քան զնջինն:
Լճ երբ տեսան զան խալիֆան զար
մացումն կալան զնա: Լճ ասաց Թէ
փառք այ որ մեծ պատիւ էր սողումն
նի. որ իւր իմաստութն իյայս նե
ղութիս և ի բանդսէր դրեր:

Լյսպիսի շնորք հողեղինի չէր տը
նէր ան բայց միայն սողումննի: Լճ
ասպա հրամայեաց խալիֆան. որ բե
ՏԴ
րին

ըին զամ ոսկին և զարծաթն և զղու-
մաշն. տեսեալ խալիֆան և շատ իւաց
Լա տառց շայս ոչբո:

Լ՛ն աղ տամ ու բերան. քո տիրոջն
որում դուն էիր. որ այս անէհուն
գանձէս. ապա տանք տարիւր հետքե-
ղի: Լորթամ աղաջեմ զամ. որ տայ
ինձ աղէկ թապտիր. որ աստ տամ և
անդ առնում. և չթողում այս
պէս ի յերկիր:

Լ՛ն ապա հրամայեաց խալիֆան.
զինչ մալու զումաշ բերեալ էին
զամէնն բաշխեաց աղքատաց. և ա-
սաց թէ թողամ զայս իւրեանց տի-
րոջն հոգոյն համարի: Լ՛պա բերեւ
ետուր զիւր մալն զոսկին. և զարծա-
թըն և զապրանքն յամ և բաշխեաց
աղքատաց. մէկ կտաւ էառ և ասաց
թէ զթագուհուն խրատն լսեմ. աստ
տամ և յանտէնն գտանեմ յայ. զոր
ի զնտաննէր արձակեաց. զծառայքն
ազատեաց. զհարկն վերացոյց
յաշխարհէն:

Պարոն մի խալիֆան եղիր իւր տե
 ղըն և ինքն շինել ետուր սենեակ մի
 իւրեան աղօթանոց . և եմուտ ի նե
 րըս է տարի աղօթեաց . և ապա փո
 խեցաւ ի յաշխարհէս . և ամիրմու
 սէն ետուր զպարունութիւն իւր որ
 դուն . և բաշխեաց զիւր մալն . և
 զոսկին . և զապրանքն ամենայն աղ
 քատաց : Հագաւ մազեղէն և մաշ
 կեղէն . և գնաց ի լէռն բնակեցաւ
 ապաշխարութեամբ մինչև ի մահ .
 այսպէս փոխեցան ի սուտ և ի փուտ
 աշխարհէս . և հասան յաւիտենա
 կան կենացն . և երկնային ուրա
 խութիւնն ի Վս Յս ի
 Տր մեր . որէ օրհնեալ
 յաւիտեանս
 Ամեն .





* Պարտաւիտան աշէկան , ե-հունկան

Հարցնուն ։

ՅՐ ՄԻ ԼՐ ՄԵՆՈՒ

տուն և իշխան ի քաղաքիմի .

և ունէր անչափ գանձ

ոսկի և մարգարիտ անդին և պատէա
կան ակունք որ չկայր յայն աշխարհն
քան զնա մեծատուն . և ինքն ծերա
ցեալէր և զանակ չունէր . և հանա
պազ աղաչէր զան՝ ՎՍ զանակի . և
անձ ետ նմա որդի աննման և գեղե
ցիկ . երբ մեծացան տղայն երես
հայրն զնա յուսումն իմաստասիրու
թե . և ուսան զամ իմաստասիրակն

ՃԷ

բա



բանս . և էր պատերձմող ան յաղթ :
Բայց յետոյ ուտել և խմել անկաւ
և հատուց զգանձ հօրն և մօրն . և
հայրն ու մայրն մնացին դատարկ որ
այլ իսկի բնաւ իրք չի մնաց :

Եւսաց որդին ընդ հօրն և մօրն թէ
կամիք որ հեռանամք յայս երկրէս
և երթամք հանց երկիր որ ոչ ճանա
չեն զմէզ . և զհպարտութիւն յետ դը
նեմք մուրամք և ապրիմք . և ոչ մեք
տրտմիմք . և ոչ մեր չար կամն ուրա
խանայ ՚ի վերայ մեր :

Եւսացին ծնողքն թէ դու գիտես
որդեակ :

Եւառ մանուկն զհայրն և զմայրն .
և գնաց ՚ի հռոմ . և հասան ՚ի քաղաք
մի և կայր ՚ի քաղաքին յայնմիկ թա
գաւոր մի բարի և իմաստուն . մտան
՚ի քաղաքն իջան ՚ի տուն մի . և այն
թագաւորն յորսէր ելեր . եկաւ թա
գաւորն ՚ի յորսուն . և մտաւ մանուկն
առ թագաւորն . եղ ծունր և կանգ
նեցաւ . և սկսաւ խօսել ընդ ման
ծը
կա

կանն . և ասաց ինչ խնդրես յինէն .
և պարգևեմքեզ :

Ասէ մանուկն Թագաւորին, ես ք
ծառայ ունիմ ծախու այր և կին :

Ասէ Թագաւորն բեր և ես գնեմ .
գնաց մանուկն առ հայրն և մայրն .
և ասաց ընդ ծնողացն թէ ինչ պատ
եհէ ինձ կամիմ հանց բան առնել
որ դուք այլ ապրիք և ես այլ :

Ասացին ծնողքըն թէ դու գիտես
որդեակ :

Ասաց մանուկն թէ կամիմ ծախել
զձեզ յայս Թագաւորիս . որ հասնիք
բարութեան . և ձեր գնովն ինձ բա
րի լինի . և ես ջանամ շուտով ազա
տել զձեզ դուք ինչ գու հրամայէք
Ասացին ծողքըն թէ դու գիտես
որդեակ :

Առ մանուկն զհայրն և զմայրն .
և գնաց առ Թագաւորն :

Ասաց Թագաւորն մանկանն թէ քա
նի ծախես :

Ասէ մանուկն Թագաւորին՝ տուր
ճԹ ինձ

ինձ այս կին ծառայիս գին աղէկ ձի
և սէ՛հ իւր սարօքն. և այր մարդուն
գինն տուր ինձ աղէկ հալա՛ն և ըզ
գետտ պատուական. հրամայեաց թա
գաւորն զինչ որ մանուկն խնդրեց
իւր ծառայիցն գին լիակտար տուին
զամէնն. և թուր մի ոսկի գոտով.
էառ մանուկն զոր պարգեւեաց
նմա թագաւորն:

Եւ թագաւորն մանկանն այլ ինչ
կուզես յինէն խնդրես որ տամքեզ:
Եւ թէ մանուկն. Ճ Գլորի խարճի
տուր: հրամայեաց թագորն և տվին.
Եւ թէ ցմանուկն այլ ինչ ուզես յինէն
Եւ թէ մանուկն հրաման տուր ինձ որ
խօսիմ ընդ քո ծառայիցն որ յինէ
գնեցեր. որ զիւրեանց օրհնու
թիւնն առնեմ.

հրամայեաց թագաւորն գնայ և խօ
սեայ. և իմացաւ թագաւորն որ իւր
ծնողքն էին:

Գնաց մանուկն և անկաւ յոտս ծնո
ղացն և ասէ. մի հոգայք. թէ անկա
մե

մենայ զձեզ շուտով կու ազատեմ:
Եւ ծնողքն օրհնեցին զզանակն իւ
րեանց . Լմանուկն յիշեաց զանձ . Եւ
մեկնեցան ի ծնողացն լալով . Եւ գնաց
ք օր . Եւ ք գիշեր, ի մեծ դաշտ մի:
Եւ ի գնալն հանդիպեցան ընտիր
մանուկ մի բարեւեցին զմիմեանս . Եւ
ընկերացան ի ճանապարհին:

Եւ երբ որ ընկերացան նա մանուկն
իմացան զմիւս մանկան խօսքն . որ
զհայրն Եւ զմայրն ծախերէր:

Եւ այց միւս մանուկն թէ գիտացիր
զի իմ թագաւորն զիս խիստ կու սի
րէր . Եւ թուղթ անետեաց երեստ որ
տանիմ առ կը զգեաց թագաւորն . Եւ
առնում պարգևս մեծամեծս . տեսա
նեմ զքեզ զի դու խելօք մանուկես
Եւ լան ձիաւոր քան զիս . առ զթըղ
թերդ Եւ դու տար այն թագաւորին .
քեզ շատ բարիք կու պարգևէ . զինչ
որ անձ նասիպ արերէ քեզ լինի .
ես յայս դաշտս կու կենամ մինչեւ
որ դու գաս առիս:

Կա

Եւ

Լառ մանուկն զայն Թըղթերն 'ի
 սէկէ քէսան եդիր. և գնաց 'ի ճանա
 պարն իւր. 'ի մեծ դաշտ մի. և յան
 կարծակի յիշեց զհայրն ու զմայրն
 և շատ իլաց. և 'ի շատ հոգոցն նրն
 քեաց 'ի վրձիուն. և ձին 'ի ճանապար
 հէն ելան. և կորոյս 'ի քընոյն զճա
 նապարն. և յանկարծակի զարթեւ
